ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ Է ՄԱՏՈՒՑՎԵԼ ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՈՐԴԻ՝ ՀՐԱՉԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

17.10.2021 15:54

Հայրենիքի պաշտպանության համար փաստաբանների ընտանիքների զոհված անդամների հիշատակը հարգելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված հարգանքի տուրք մատուցելու համար **2021 թվականի հոկտեմբերի 17-ին** ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպվել էր միջոցառում:

Հոկտեմբերի 17-ը, Արցախյան երկրորդ պատերազմում զոհված Հրաչիկ Ավետիսյանի ծննդյան օրն է:

Փաստաբան Մաի Հակոբյանի որդի Հրաչիկ Ավետիսյանը ավարտել էր Երևանի Բ.Ժամկոչյանի անվան թիվ 119 դպրոցի հայ-ֆրանսիական լիցեյը, Երևանի Վալերի Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի 1-ին կուրսի ուսանող էր: Մինչև պատերազմի սկսվելը պարգևատրվել էր «Քաջարի մարտիկ» կրծքանշանով: Հրաչիկ Ավետիսյանը հերոսաբար կռվել և զոհվել է Մատաղիսի ամենավտանգավոր դիրքերի խաչմերուկում՝ 2020թ. հոկտեմբերի 6-ին ԱԹՍ հարվածից:

Փաստաբանական համայնքի ներկայացուցիչները, Հրաչիկ Ավետիսյանի դասընկերներն ու հարազատները իրենց հարգանքի տուրքը մատուցեցին հերոսի ընտանիքին՝ այցելելով Եռաբլուր զինվորական պանթեոն՝ Հրաչիկ Ավետիսյանի շիրիմին:

Այնուհետև, ՀՀ փաստաբանների պալատի մեծ դահլիճում տեղի է ունեցել ՀՀ **«Չպարտվածները» վավերագրական ֆիլմի դիտումը**:

Ֆիլմը պատմում է փաստաբանների նահատակված զավակների՝ **Հրաչիկ Ավետիսյանի, Լևոն Լևոնյանի և Միքայել Դանիելյանի** մասին, ովքեր անձնվիրաբար մարտնչել և անմահացել են արցախյան երկրորդ պատերազմում:

«Առաջին հայացքից այս երեխաները, իրականում հասուն, վճռական տղամարդիկ են, ովքեր շատ ավելի բան են արել մեր և մեր երկրի համար, քան մենք բոլորս: Նրանք չեն պարտվել: Նրանք արել են ամեն ինչ, որ մենք կարողանանք ապրել և ունենալ պետականություն: Մեր գործընկերների զավակների հիշատակը մենք միշտ վառ ենք պահելու և մեր առաքելությունն է, որպեսզի

մենք միշտ հիշենք նրանց և հպարտանանք»,- իր խոսքում նշել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը:

Տեսաֆիլմի դիտումից հետո միջոցառման ներկաները հիշեցին Հրաչիկի ապրած օրերից հետաքրքիր դեպքեր, սփոփանքի ու երախտիքի խոսքեր ասեցին Հրաչիկի մորը՝ փաստաբան Մաի Հակոբյանին:

Հ.Գ. Փաստաբանների պալատի նախաձեռնության համաձայն ամեն տարի փաստաբանական համայնքն իր հարգանքի տուրքն է մատուցելու մեր հերոսների ընտանիքներին:

Դիտել «Չպարտվածները» տեսաֆիլմը

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })